

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆ
ԱՄԲԵՐԴԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИ МАРЗ
ЭЧМИАДЗИНСКИ РЕГИОН
СЕЛЬСКАЯ ОБЩИНА АМБЕРД

N 01-88
«06» ԱԵՊՏԵՄԲԵՐԻ 2011թ

ՀԵՌ.(093) 32-59-62
ՏԵԼ.(093) 32-59-62


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝
ՊՍՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ՝ Ա. Ղահրամանյան

Կից ներկայացնում ենք Ձեզ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ամբերդի գյուղական համայնքի ղեկավարի 2011թվականի օգոստոս ամսվա ընթացքում ընդունած որոշումները և և արձակած կարգադրությունները:

Առդիր 3 թերթ:

Համայնքի ղեկավարի պաշտոնատեղում
L. Վարդանյան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԱՄԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 8-Ա

«16» ՕԳՈՍՏՈՍԻ 2011թ.

Գ. ԱՄԲԵՐԴ

2011 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 04.2.4 ՆԱԽԱՐԱՇՎՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետով և հիմք համարելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ամբերդի գյուղական համայնքի 2010 թվականի նոյեմբերի 24-ի ավագանու թիվ 14 նիստի N 2-Ն որոշման 8 և 9 կետերով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ամբերդի գյուղական համայնքի 2011 թվականի բյուջեով նախատեսված 08.2.4. այլ մշակութային կազմակերպություն ֆինանսական պարտավորությունների ժամանակացույցով նախատեսված 4239 հոդվածի 4-րդ եռամսյակի գումարից 200.0 հազար դրամը տեղափոխել 3-րդ եռամսյակ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝

Ս. Բաբայան

2011 թվականի օգոստոսի 16

Գ. Ամբերդ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԱՄԲԵՐԴ ՀԱՍԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 9-Ա

«25» ՕԳՈՍՏՈՍԻ 2011թ.

Գ. ԱՄԲԵՐԴ

ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 118-րդ հոդվածի 6-րդ կետով, Մայրանուշ Հովհաննեսի Պողոսյանի ժառանգ Տիգրան Սամվելի Պողոսյանի միջնորդությունը հաշվի առնելով, որ չի պահպանվել հողհատկացման հիմքը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ամբերդ համայնքում հանգուցյալ Մայրանուշ Հովհաննեսի Պողոսյանին (ժառանգ՝ Տիգրան Սամվելի Պողոսյան) պատկանող 1947 թվականին կառուցված Մայիսյան փողոցի 23 հասցեում 04-008-009-013 կադաստրային ծածկագրի տակ գտնվող բնակելի տան, և 04-008-134-008 կադաստրային ծածկագրի տակ գտնվող վարելահողի հողհատկացման հիմքերը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝

Մ. Բարայան

2011 թվականի օգոստոսի 25

Գ. Ամբերդ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՄԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 13-Ա**

«25» ՕԳՈՍՏՈՍԻ 2011թ.

Գ. ԱՄԲԵՐԴ

ՄԱՆՎԵԼ ԲԱԲԱՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի առաջին մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի թիվ 1384-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության Արմավիրի Մարզի Ամբերդի գյուղական համայնքի Ղեկավարի Աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգի 18-րդ և 22-րդ կետերով.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Ամբերդ համայնքի ղեկավար՝ Մանվել Բաբայանին տրամադրել ամենամյա արձակուրդ 24 աշխատանքային օր (20 աշխատանքային օր նվազագույն և գումարած 4 աշխատանքային օր լրացուցիչ) տեվողությամբ, սկսած 2011 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2011 թվականի հոկտեմբերի 5-ը ներառյալ:
1. Համայնքի ղեկավարի աշխատանքային պարտականությունները նշյալ ժամանակահատվածում դնել համայնքի ղեկավարի տեղակալ՝ Լևիկ Վարդանյանի վրա:
2. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար



Մ. Բաբայան

2011 թվականի օգոստոսի 25

Գ. Ամբերդ